ԱՆԻՖ-ը միջազգային փորձը հասանելի է դարձնում հայ արտահանողներին

Like 0 Tweet Save Համօգտագործել



18:34, 22 Հուլիս, 2021

ԵՐԵՎԱՆ, 22 ՀՈՒԼԻՍԻ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդը (ԱՆԻՖ)՝ Հայաստանի արտահանման շուկաների ընդլայմանը նպաստելու ծրագրի շրջանակներում հուլիսի 21-ին կազմակերպել էր բարձր որակավորման դասընթաց «Բիզնես մոդելներ և առաջարկներ» թեմայով առաջին մոդուլը՝ հայաստանյան արտահանող ընկերությունների համար:

«Արմենպրես»-ի փոխանցմամբ՝ ուսուցմանը մասնակցում էին շուրջ 30 առաջատար հայկական ձեռնակությունների հիմնադիրներ, բարձր և միջին օղակի ղեկավարներ:

Բանախոսներն էին առաջատար միջազգային փորձագետներ՝ «Սենտեո» ընկերության հիմնադիր և գործադիր տնօրեն, ավելի քան 30 երկրների առաջատար բիզնես կազմակերպությունների և կառավարությունների խորհրդատու Մայքլ Ռակմանն ու վերափոխումների և ռազմավարության փորձագետ, Գնահատման և խորհրդատվության միջազգային ակադեմիայի տնտեսագիտության և ազգային տնտեսության կառավարման գիտությունների թեկնածու Ալեքսեյ Վերետենովը:

Նախագծի նպատակն է հնարավորություն տալ հայ ձեռնարկատերերին զարգացնել արտահանման ներուժը, ընդլայնել ընկերության ներկայությունը տարբեր աշխարհագրական տեղանքներում, մեծացնել սպառողական շուկան և գտնել ուղիներ միջազգային շուկա մուտք գործելու համար:

Ողջունելով սեմինարի մասնակիցներին և խոսելով նախաձեռնության մասին՝ ԱՆԻՖ-ի գործադիր տնօրենի տեղակալ Սերգեյ Գրիգորյանն ասաց.

«Նման նախաձեռնության գաղափար ունեինք դեռևս ԱՆԻՖ-ի հիմնադրման օրվանից: Մեր նպատակն էր Հայաստան բերել միջազգային լավագույն փորձը, հրավիրել Ա դասի ընկերությունների և հայ ձեռնարկատերերին հնարավորություն ընձեռել շփվելու առաջատար փորձագետների հետ: ԱՆԻՖ-ի հրավիրած միջազգային մասնագետները այս բնագավառում հսկակյական փորձ ունեն: Նրանց աշխատանքի արդյունքում արդեն կայացած խոշոր կառույցները գրանցել են մի քանի անգամ ավելի ֆինասական արդյունքների աճ, մեծ թվով նոր հաճախորդներ ներգրավել և, բնականաբար, ԱՆԻՖ-ի ցանկությունն էր, որպեսզի այդ գիտելիքները հասանելի դառնան նաև Հայաստանի բիզնես հանրությանը»:

Սերգեյ Գրիգորյանը հավելեց, որ նման նախաձեռնությունները շարունակական են լինելու, գուցե, ԱՆԻՖ-ը նեկայանա նոր ձևաչափերով, քանի որ նպատակ ունենք ապահովել նման միջոցառումների պարբերականությունը:

Միջազգային փորձագետ, սեմինարավար Ալեքսեյ Վերետենովն էլ հավելեց. «Մեր համագործացությունն ԱՆԻՖ-ի հետ սկսվել է մեկ ու կես տարի առաջ: Ուրախ ենք, որ մեզ վստահվել է Հայաստանի համար այնպիսի կարևոր ռազմավարական ուղղության զարգացումն, ինչպիսին արտահանումն է: Ներկայում որպես Հայաստանի արտահանման թիրախները հիմնականում դիտարկվում են հետխորհրդային երկրներ, միընչդեռ Հայաստանն ունի միջազգային շուկաներ դուրս գալու մեծ ներուժ. օրինակ Արևմտյան Եվրոպայի երկրներ, Ամերիկայի Միացյալ Նահանգներ, Կանադա, Ճապոնիա և այլն: Դա մեծ մարտահրավեր է, որի հաղթահարման համար բիզնեսի կառավարման այլ մոդելներ են անհրաժեշտ: Այդ իսկ պատճառով մենք աշխատում ենք բիզնեսի կառավարման նոր և արդյունավետ մոդելներ մշակելու ուղղությամբ, որը կհեշտացնի նրանցը մուտքը զարգացած շուկաներ»:

Միջազգային փորձագետ, սեմինարավար Մայքլ Ռակմանը, խոսելով սեմինարի ծրագրի մասին, նշեց. « Մենք տեսնում ենք Հայաստանի ահռելի ներուժը՝ որպես արտադրող երկիր ճանաչելիություն և արտաքին շուկայում լուրջ մասնաբաժին ձեռք բերելու տեսնակյունից: Հենքային և համակարգային գիտելիքներ փոխանցելու նպատակով մշակել ենք 3 մոդուլներից բաղկացած բիզնեսների ուսուցման ծրագիր: Այսօր հաջողությամբ ավարտեցինք առաջին մոդուլը: Մասնակիցների հետ ունենալու ենք ևս 3 հանդիպում՝ «Բաշխման ուղիներ և հարաբերությունների կառավարում», «Կորպորատիվ մշակույթ, կազմակերպական էվոլյուցիա, ապրանքանիշ և հաղորդակցություն» մոդուլներ»:

Սեմինարի մասնակիցներից՝ «Կենսատու» բրենդը ներկայացնող, «Nahapet Brandy Company»-ի համահիմնադիր Տաթև Հարությունյանը նշեց. «ԱՆԻՖ-ն այս փուլում մեր երկրի համար շատ կարևոր առաքելություն է ստանձնել՝ Հայաստանում ներդրումներ ներգրավել և մեր տեղական արտադրողներին օգնել ներկայանալ միջազգային տարբեր շուկաներում: Հետաքրքիր քննարկումներով, բոլորիս համար օգտակար սեմինար էր, և օգտակար ոչ միայն սկսնակ, այլև երկար տարիների պատմություն ունեցող բիզնեսների համար, որովհետև փորձառու և միջազգային մասնագետներից միշտ սովորելու և նորն իմանալու հնարավորություն կա»:

Սեմինարի բոլոր մոդուլների ավարտից հետո մասնակից ձեռնարկատերերին կտրվի ԱՆԻՖ-ի և «Սենտեո» ընկերության որակավորման վկայագիր:

ԱՆԻՖ-ը հիմնադրվել է 2019թ.-ին՝ օտարերկրյա ներդրումների ներգրավման, արտահանման աճի խթանման և Հայաստանում լայնածավալ նախագծերում ներդրումները համաֆինանսավորելու

մանդատով: ԱՆԻՖ-ի գործունեությունը միտված է օտարերկրյա ներդրումների ներգրավմանը, Հայաստանում ռազմավարական կարևորության ակտիվների պորտֆելի կառավարմանը: Ընկերության համար առաջնահերթ ոլորտներն են էներգետիկան, մետաղները և հանքարդյունաբերությունը, գյուղատնտեսությունը, լոգիստիկան և ենթակառուցվածքները, ֆինանսական ծառայությունները, առողջապահությունը, ՏՏ-ն, արդյունաբերությունը, սպառողական ապրանքները և տուրիզմը: ԱՆԻՖ-ը համատեղ ներդրումներ է իրականացնում փորձառու գործընկերների, մասնագետ օպերատորի հետ: Կառույցը տրամադրում է նոր և արդեն իսկ գործող ծրագրերի ֆինանսավորում և աջակցում է առևտրային բանկերից և ՄՖԿ-ներից ֆինանսավորում ներգրավելու հարցում:

Like 0 Tweet Save Համօգտագործել

Տպել | AMP Տարբերակ

x
Կարծիքներ



09:50, 07.07.2021
ՀԱՊԿ-ն նախքան գնահատական տալը պետք է քննիչ հանձնաժողով ուղարկեր հայ-ադրբեջանական սահման. Քեռյան



16:16, 05.06.2021
Հզոր հայության բանաձևը

Բաժնի բոլոր նյութերը

x
Հարցազրույցներ



19:02, 08.07.2021
Հայ-ռուսական ռազմաքաղաքական և ռազմատեխնիկական հարաբերությունները այսօր ամենաբարձր մակարդակի վրա են. Արամ Սաֆարյան



17:35, 18.06.2021
Արցախի հարցում ամեն բան կորած չէ. մեզ անհրաժեշտ են իրավահեն փաստարկներ և բացառիկ գիտելիքներով ու փորձով ղեկավարներ

Բաժնի բոլոր նյութերը

x
Փաստ մեկնաբանությամբ



12:57, 26.05.2021
Շահան Գանտահարյանը մեկնաբանել է Հայաստանի հետ խաղաղության պայմանագիր կնքելու վերաբերյալ Բայրամովի հայտարարությունը



09:32, 26.05.2021
Իրանը ձգտելու է ընդլայնել բոլոր ոլորտներում Հայաստանի հետ համագործակցությունը. իրանագետը՝ Զարիֆի այցի մասին

Բաժնի բոլոր նյութերը

x
Հատուկ նախագծեր



09:25, 19.07.2021
«Նոր գիրք»-20/21. Նոր գրքեր՝ ամռանն ընթերցելու համար



09:51, 16.07.2021
«Երևանյան բեսթսելեր». «Ալբիմիկոսը»՝ առաջին հորիզոնականում. թարգմանական. հունիս, 2021

Բաժնի բոլոր նյութերը





Լրահոս


22.07-21:58 Արմավիրի մարզի Ամասիա գյուղում 150 հակ անասնակեր է այրվել
22.07-21:40 Ոստիկանության Երևան քաղաքի բաժիններում քաղաքացիները հրազեն ու

ռազմամթերք են հանձնել
22.07-21:32 Հայկ Մարտիրոսյանը կրկին հաղթել է աշխարհի գավաթի խաղարկության հերթական փուլում
22.07-21:23 Լուկաշենկոն իր լիազորությունների մի մասը փոխանցել է կառավարությանը
22.07-21:09 Կարգապահական հանձնաժողովը քննել է ոստիկանության 3 աշխատակիցների ծառայողական քննության նյութերը
22.07-20:58 **Ասկերանի մոլորված ու Ադրբեջանի վերահսկողության տակ գտնվող հատված անցած բնակիչը վերադարձվել է**
22.07-20:35 **Ադրբեջանում 13 հայ ռազմագերի դատապարտվել է 6 տարվա ազատազրկման**
22.07-20:16 Բայդենը կհայտարարի Կուբայի կառավարության առանձին անդամների նկատմամբ պատժամիջոցներ սահմանելու մասին
22.07-20:07 **Մեկնարկել են MyWay ավիուղիների Թբիլիսի-Երևան-Թբիլիսի երթուղով չվերթերը**
22.07-19:58 Նիկոլ Փաշինյանի որոշմամբ ստեղծվել է ՌԴ-ի հետ տիեզերական գործունեության ոլորտում համագործակցության աշխատանքային խումբ
22.07-19:41 **ՀՀ ՊՆ-ն պարզաբանել է անհայտ կորած զինծառայողների ընտանիքներին աջակցության կարգը**
22.07-19:34 **Հայաստանը դիտորդական առաքելություն կգործուղի ՌԴ Պետդումայի ընտրություններին**
22.07-19:21 **ՌԴ-ն մտահոգությամբ է ընդունում հայ-ադրբեջանական սահմանին լարվածության աճի ցանկացած դրսևորում. Զախարովա**
22.07-18:57 «Արարատ»-ը զիջեց «Շյյոնսկ»-ին Գյումրիում
22.07-18:43 Նիկոլ Փաշինյանը հեռախոսազրույց է ունեցել Վլադիմիր Պուտինի հետ
22.07-18:40 Բագրատաշենի մաքսատան մոտ ավտոմեքենաների բախումից գազի բալոն է պայթել. մեկ մարդ զոհվել է
22.07-18:34 ԱՆԻՖ-ը միջազգային փորձը հասանելի է դարձնում հայ արտահանողներին
22.07-18:28 **Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոնը համալրվել է բացառիկ սարքավորումներով**
22.07-18:16 **«Հայաստան» դաշինքի խմբակցության ղեկավար է ընտրվել Սեյրան Օհանյանը, իսկ քարտուղար՝ Արծվիկ Մինասյանը**
22.07-18:09 UCOM-ն առաջարկում է «WI-FI AS A SERVICE» ծառայությունը բիզնես հաճախորդներին
22.07-17:53 **Տոկիո-2020. հայտնի են բռնցքամարտիկների մրցակիցները**
22.07-17:51 ՀՀ ԿԲ. թանկարժեք մետաղների գներ եւ փոխարժեքներ. 22-07-21
22.07-17:50 Ասիական ինդեքսներն աճել են. 22-07-21
22.07-17:49 **Հուլիսի 23-ի միջոցառումների անոնս**
22.07-17:43 Մեկնարկում է սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստման ծրագիրը

Բոլոր նորությունները

Վաղը

Armenpress
109 604 "Нравится"
Нравится Страница
Свяжитесь с нами



ՀՀ ԿԲ		22/07/2021
Դոլար	484.42	-3.15
Եվրո	571.37	-2.65
Ռուբլի	6.57	+0.01
Ֆունտ	665.98	+1.18
Ոսկի	28067.52	-510.13
Արծաթ	391	-2.38
Պլատին	16617.95	-170.77

x

Շաբաթվա ամենաընթերցվածը



20:48, 20.07.2021
Դիտվել է 3368 անգամ
Մենք պետք է գնանք փոխզիջումներ գտնելու ճանապարհով. Պուտինը՝ Ալիևին



21:36, 17.07.2021
Դիտվել է 2631 անգամ
Ադրբեջանցի զինծառայողները Երասխի հատվածում պարբերաբար կրակել են հայկական դիրքերի ուղղությամբ



09:41, 16.07.2021
Դիտվել է 2322 անգամ
Կկանգնենք մինչև վերջ, բայց երբեք չենք լինի Ադրբեջանի կազմում. Արցախի ԱԳ նախարար



14:59, 19.07.2021
Դիտվել է 2176 անգամ
Ադրբեջանական կողմը չի խորշում եռակողմ հայտարարությանը բացահայտ կեղծիքներ վերագրելուց. ՀՀ ԱԳՆ



19:45, 19.07.2021
Դիտվել է 1946 անգամ
Խաչատուր Սուքիասյանն անդրադարձել է Ամիրյան փողոցում կրակոցների դեպքին

Copyright © 2021. ARMENPRESS

The copyright for information published on this web site is owned exclusively by Armenpress news agency. All information materials published on this website are intended solely for personal use.
For full or partial reproduction of any material in other media it is required to acquire written permission from Armenpress news agency. Those, who have committed copyright violations, will be prosecuted accordingly.
Կայքում արտահայտված կարծիքները պարտադիր չէ, որ համընկնեն կայքի խմբագրության տեսակետի հետ:
Գովազդների բովանդակության համար կայքը պատասխանատվություն չի կրում:

Գործակալության մասին

Հասցե՝ Հայաստան, 0002, Երեւան, Սարյան փող 22, Արմենպրես
Հեռ.՝ +374 11 539818
Էլ-փոստ՝ contact@armenpress.am

Էջի կարգավորումներ

<Նախ.Հաջ.>

Հուլ 2021

երկ	երք	չրք	հնգ	ուրբ	շբթ	կիր
			1	2	3	4
5	6	7	8	9	10	11
12	13	14	15	16	17	18
19	20	21	22	23	24	25
26	27	28	29	30	31	